ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

Նորապսակ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը (Գալեմտերյանը), ավազանի անունով Անդրանիկ, ծնվել է 1928 թվականի օգոստոսի 13-ին, պատմական Անտիոքի մոտ, Միջերկրականի ափին, Քեսաբի շրջանի Գալատուրան գյուղում։ Նրա հայրն ու մայրը բարեպաշտ մարդիկ են եղել և իրենց երեխային դաստիարակել եկեղեցասիրությամբ և բարեպաշտությամբ։

Փոքր հասակում Անդրանիկը նախնական կրթությունն ստանում է Գալատուրան գյուղի եկեղեցուն կից Մեսրոպյան ազգային ուսումնարանում, որի 7-րդ դասարանն ավարտելուց հետո, 1943 թվականին, դիմում է Անթիլիասի դպրեվանքը՝ հոգևորական դառնալու որոշումով։

1945 թվականին Բեյրութում նա տեղեկանում է, որ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը վերաբացվել է և երազում է լինել հայրենիքում ու սովորել Մայր Աթոռի նորաբաց Հոգևոր Ճեմարանում։

1946 թվականին հայրենիք դառնալով, նրան հաջողվում է ընդունվել Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որի դասընթացն ավարտում է 1950 թվականին։ Դեռևս Ճեմարանի Ա լսարանի ուսանող, նա, հոգելույս Տ. Գևորգ Զ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, 1949 թվականին սարկավագ է ձեռնադրվում։

Հոգելույս Հայրապետը, 1951 թվականին, եկեղեցա-պատմական և աստվածաբանական գիտությունների մեջ խորանալու համար, Անդրանիկ սարկավագին երկու ընկերների հետ ուղարկում է Մոսկվայի ռուսական հոգևոր ճեմարանը, որտեղ նա սովորում է երկու տարի։

1954 թվականի սեպտեմբերի 12-ին, Խաչվերացի տոնի օրը, Անդրանիկ սարկավագը կուսակրոն քահանա է ձեռնադրվում Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի ձեռքով, վերանվանվելով Վահան աբեղա։

1956—1957 թվականներին, մեկ տարի, Վահան աբեղան վարում է Վրաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը։

1956 թվականի հոկտեմբերի 6-ին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետից ստանում է վարդապետական աստիճան։

1957 թվականի նոյեմբերի 4-ին նշանակվում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ, պաշտոն, որը մինչև այսօր վարում է ձեռնհասորեն։

1964 թվականի մայիսի 30-ին Վահան վարդապետն ստանում է ծայրագույն վարդապետական գավազանի իշխանություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից, որպես թեզ ներկայացնելով «Ս. Էջմիածնի դպրոցի պատմությունը Դ դարից մինչև Ի դարը»։

Վահան վարդապետը մնայուն կերպով աշխատակցել է «Էջմիածին» ամսագրին պատմա-բանասիրական հոդվածներով։ Նա վերջերս անդամ է ընտրված «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմնի։

Վեհափառ Հայրապետը, գնահատելով Վահան ծայրագույն վարդապետի ծառայությունը Արարատյան թեմում, նոյեմբերի 29-ին ձեռնադրեց նրան եպիսկոպոս, միջնորդությամբ Դերագույն Հոգևոր Խորհրդի և թեմական խորհրդի։

Նորապսակ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանը գտնվում է իր ուժերի զարգացման շրջանում։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, շերմորեն շնորհավորելով նրան, վստահություն է հայտնում, որ Տ. Վահան եպիսկոպոսը իր հետագա վարչական և գրական գործունեությամբ կարդարացնի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունը և յուրովսանն կծառայի Մայր Աթոռին և Հայաստանյայց Եկեղեցուն։